

ՏՆՏՀԱՇՎԱՐԿԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԻՋԻՆ ՕՂԱԿՈՒՄ

(ՀՍՍՀ թեթև արդյունաբերության մինիստրության օրինակով)

ՆԵՐՍԵՍ ԲՈՒՌՆԱԶՅԱՆ

ՍՍՀՄ թեթև արդյունաբերության կառավարման գլխավոր սխեմայով, որը մշակվել է ՍՄԿԿ Կենտկոմի ու ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1973 թ. մարտի 2-ի «Արդյունաբերության կառավարման հետագա կատարիչագործման որոշ միջոցառումների մասին» որոշմանը համապատասխան և հաստատվել է ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի կողմից, նախատեսված է. ա) կրճատել օդակայանությունը կառավարման գործում, այսինքն՝ հնգօդակի փոխառեն հոգակ ու քառօդակ սիստեմների անցնել, վերացնելով տրեստներն ու գլխավոր վարչությունները։ Ստեղծել մասնազիտացված արդյունաբերական միավորումներ, բ) բարելավել միութենական հանրապետությունների մինիստրությունների կենտրոնական ապարատների կառուցվածքը, կրճատել կառավարման ապարատի աշխատողների թիվը և նրանց պահպանման ծախսերը, գ) նախապատրաստել և իրականացնել թեթև արդյունաբերության կառավարման ավտոմատացված սիստեմի ստեղծման միջոցառումներ։

Այս սխեմայի իրականացման աշխատանքները հիմնականում ավարտվեցին 1977 թ.։ Այժմ միութենական ենթակայության ձեռնարկությունները կառավարվում են երկօդակ, իսկ ՌՍՖՍՀ-ի, Ուկրաինայի, Բելոռուսիայի ու Ղազախստանի թեթև արդյունաբերության մինիստրությունների ենթակայության տակ գտնվողները՝ քառօդակ սիստեմով. ՍՍՀՄ թեթև արդյունաբերության մինիստրություն—միութենական հանրապետության մինիստրություն—հանրապետական արդյունաբերական միավորումներ—արտադրական միավորումներ։ Մնացած միութենական հանրապետությունների, այդ թվում Հայկական ՍՍՀ-ի, թեթև արդյունաբերության մինիստրությունները փոխադրվել են կառավարման հոգակ սիստեմի՝ ՍՍՀՄ թեթև արդյունաբերության մինիստրություն—միութենական հանրապետության մինիստրություն—արտադրական միավորումներ (կոմբինատներ, ձեռնարկություններ)։ Այս պայմաններում Հայկական ՍՍՀ թեթև արդյունաբերության մինիստրությունը հանդես է գալիս որպես կառավարման միջին օղակ։

ՍՍՀՄ թեթև արդյունաբերության կառավարման գլխավոր սխեմայով նախատեսված միջոցառումների անբաժանելի մասը դարձավ 1975 թ. մայիսից «Համամիութենական և հանրապետական արդյունաբերական միավորումների ընդհանուր կանոնադրության» տարածումը Հայկական ՍՍՀ թեթև արդյունաբերության մինիստրության գործունեության վրա։ Դա թույլ տվեց ճյուղի աշխատանքի համար ստեղծել 1968 թ. հաստատված «Հայկական ՍՍՀ թեթև արդյունաբերության մինիստրության մասին կանոնադրությամբ» նախատեսվածից տարբերվող տնտեսաիրավական նոր պայմաններ։ Գլխավոր տարբերությունն այն է, որ, եթե առաջնորդում, մի կողմից, մինիստրության, որպես ճյուղային կառավարման մարմնի, իսկ, մյուս կողմից, նրա իրավասությանը ենթակա ձեռնարկությունների անելիքներն առանձին փաստաթղթերով էին սահմանված, ապա նոր պայմաններում ճյուղային սիստեմի բոլոր օղակների գործունեությունը դիտվում է որպես մի ամբողջություն։ Հայկական ՍՍՀ թեթև արդյունաբերության մինիստրությունն այժմ այդ առումով արդյունաբե-

րական ձեռնարկությունների, գիտահետազոտական, կոնստրուկտորական, նախագծային-կոնստրուկտորական, տեխնոլոգիական և այլ կազմակերպությունների ամբողջությունն է՝ արտադրատնտեսական միասնական համալիր:

Մինիստրությունը գործում է տնտեսավարկի հիմունքներով և ապահովում է արտադրանքի թողարկման բոլոր ծախսերի, ներառյալ նախագծային, կոնստրուկտորական, գիտահետազոտական աշխատանքների, նոր արտադրատեսակների ու պրոցեսների յուրացման, կառավարման ապարատի պահպանության ծախսերի լրիվ հատուցումը, բյուջեի ու բանկերի հետ հաշվարկներ կատարելու, նյութական խթանման կենտրոնացած ֆոնդերի ու ֆինանսական ռեզերվների ստեղծման համար անհրաժեշտ շահույթի ստացումը:

Նոր ձևով աշխատանքի անցնելը Հայկական ՍՍՀ թեթև արդյունաբերության մինիստրությունից պահանջեց արմատապես վերակառուցել կառավարման սկզբնական օղակը: Մեծ աշխատանք կատարվեց միավորումների ստեղծման և արտադրություն համակենտրոնացման համար, որի շնորհիվ սկզբնական օղակների թիվը կրճատվեց ու հասցվեց 37-ի, իսկ արտադրական միավորումներին ու կոմբինատներին ավելացվեց և դարձավ 21: 1980 թ. արտադրական միավորումներն ու կոմբինատները տվեցին 961,1 մլն ռ. համախառն արտադրանք, որը կազմեց սիստեմում թողարկված ամբողջ արտադրանքի 87,2%-ը¹: Այդ նույն տարում ինքնուրույն գործող 16 ձեռնարկությունները թողարկեցին 140,3 մլն ռ. համախառն արտադրանք: Ամեն մի ձեռնարկության միջին հաշվով բաժին ընկավ 8,7 մլն ռ., մինչդեռ յուրաքանչյուր արտադրական միավորման բաժինը կազմեց 48,1 մլն ռ.՝ ավելի քան 5,5 անգամ շատ:

Այս տվյալները վկայում են, որ խոշոր արտադրական միավորումներն ու կոմբինատները դարձել են սկզբնական օղակի հիմնական և առաջատար ձեռնարկություններ:

Արտադրության համակենտրոնացման մակարդակի բարձրացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների շնորհիվ միավորումներում բաշխվող բարձրագույն է աշխատանքի արտադրողականությունը: Այսպես, եթե ամբողջությամբ վերցված մինիստրությունում արդյունաբերական-արտադրական անձնակազմի մեկ աշխատողի հաշվով արտադրանքը 1980 թ. կազմել է 14727 ռ., ապա արտադրական միավորումներում ու կոմբինատներում այդ ցուցանիշը կազմել է 16206 ռ., այսինքն՝ 1479 ռ. ավելի:

Ճյուղային սիստեմի զարգացման մյուս ուղղությունն է արտադրատնտեսական ու գիտատեխնիկական ֆունկցիաների կենտրոնացումը և մասնագիտացված ճյուղային կազմակերպությունների ստեղծումը: Ներկայումս դրանք վեց են՝ հատուկ նախագծային-կոնստրուկտորական բյուրոն, աշխատանքի ու կառավարման գիտական կազմակերպման կենտրոնը, նորաձևությունների տունը, հաշվողական կենտրոնը, շիննորոգման վարչությունը և կենտրոնացված պահեստը: Վերոհիշյալ կազմակերպությունների մասնակցությամբ մշակվում և իրականացվում են արտադրության և ամբողջ ճյուղի կատարելագործման մի շարք խոշոր ծրագրեր՝ որակի կառավարման ճյուղային սիստեմը, կառավարման ճյուղային ավտոմատացված սիստեմը, տնտեսական ղեկավարների պրոֆեսիոնալ-պաշտոնական պատրաստման սիստեմը և այլն: Արդեն ավարտվում է արտադրանքի որակի կառավարման ճյուղային սիստեմի մշակումը մինիստրության մակարդակով (մշակվել ու ներդրվել են 17 ստանդարտներ): 1976—1981 թթ. ամբողջ սիստեմում մշակվել և արտադրության մեջ ներդրվել է ավելի քան 600 ստանդարտ, որոնց հիման վրա բոլոր միավորումներում արմատավորվել է որակի կառավարման կոմպլեքսային սիստեմը: Դա նպաստեց որակի բարձր կատեգորիայի արտադրանքի ավելացմանը: Այսպես, եթե այդպիսի արտադրանքը 1975 թ. կազմել է մինիս-

¹ Այս և հետագա թվական տվյալները վերցված են ՀՍՍՀ թեթև արդյունաբերության մինիստրության տարեկան հաշվետվություններից:

տրոսթյան համախառն արտադրանքի 5,1%-ը, ապա 1981 թ. այդ ցուցանիշը հասել է 24,3%-ի:

Արտադրական միավորումների ստեղծումը և արտադրատնտեսական ֆունկցիաների կենտրոնացումը որակապես նոր մակարդակի հասցրին սիստեմի տնտեսական ինտեգրացումը, որը պահանջեց էապես վերակառուցել ճյուղային կառավարման մարմինը: Մասնավորապես պլանային-տնտեսական և արտադրատեխնիկական բաժինները դարձվեցին վարչություններ և գրանցում ստեղծվեցին մասնագիտացված բաժիններ, Դրա հետ մեկտեղ, հաշվի առնելով աշխատանքի նոր պայմանները, մինիստրության կենտրոնական ապարատում կազմակերպվել են մի շարք նոր բաժիններ, այդ թվում նոր արտադրատեսակների արտադրության ու մատակարարումների բաժինը, որի հիմնական խնդիրն է ուսումնասիրել ժողովրդական սպառման ապրանքների նկատմամբ բնակչության պահանջարկը և ձեռնարկություններում կազմակերպել դրանց թողարկումը:

Առաջներում ձեռնարկությունների իրավասությանը ենթակա շատ հարցեր այժմ լուծում է մինիստրության ապարատը: Այսպես, վերջինս է լուծում տեսականու այն փոփոխությունների հարցը, որոնք կապված են արտադրության դժվարությունների հետ և բխում են պահանջարկից: Այդ նպատակով նոր արտադրատեսակների թողարկումը և իրացումը կազմակերպող բաժինը յուրաքանչյուր եռամսյակում հաշվի է առնում, թե ինչպես է կատարվում ըստ տեսականու մեծածախ առևտրական կազմակերպությունների հետ համաձայնեցված ապրանքամատակարարումների պլանը:

Որակապես նոր երևույթ է տնտեսական խթանման կենտրոնացված ֆոնդերի և ֆինանսական ռեզերվների ստեղծումը, որը նյութական հիմքեր է ստեղծում մինիստրությունում տնտեսավարկային հարաբերություններն ամրապնդելու համար: Դրանց ստեղծումը թույլ է տալիս ամբողջ համալիրի կենտրոնացված կառավարումը զուգակցել նրա ստորաբաժանումների ինքնուրույնության հետ, հնարավորություն է տալիս առանձին ստորաբաժանումների պլանների մեջ մտցնել գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում էկոնոմիկայի արագ զարգացման պահանջներից բխող փոփոխություններ՝ համապատասխան շտկումներ շմտցնելով մյուս ստորաբաժանումների և ամբողջությանը վերցրած մինիստրության պլանների մեջ:

«Համամիութենական և հանրապետական արդյունաբերական միավորումների ընդհանուր կանոնադրությունը» համապատասխան, Հայկական ՄԱԶ թեթև արդյունաբերության մինիստրությունում ստեղծվում են հետևյալ կենտրոնացված ֆոնդերն ու ռեզերվները. նյութական խրախուսման կենտրոնացված ֆոնդ, արտադրության զարգացման կենտրոնացված ֆոնդ, սոցիալ-կուլտուրական միջոցառումների և բնակարանային շինարարության կենտրոնացված ֆոնդ, գիտության ու տեխնիկայի զարգացման միասնական ֆոնդ, նոր տեխնիկայի ստեղծման ու ներդրման համար պարգևատրման կենտրոնացված ֆոնդ, գյուտերին ու ռացիոնալիզատորական առաջարկություններին նպաստելու ֆոնդ, ձեռնարկություններին և տնտեսական կազմակերպություններին ֆինանսական օգնություն ցույց տալու ռեզերվ, հիմնական նորոգման համար ամորտիզացիոն մասհանումների ռեզերվ:

Ֆոնդային առենք այդ ֆոնդերից մի քանիսը, դրանց խնդիրը, կազմավորումը, ինչպես նաև մինիստրությունում օգտագործման պրակտիկան: Նյութական խրախուսման կենտրոնացված ֆոնդը հիմնականում նախատեսված է լրացուցիչ արտադրանքի թողարկման, նոր տեխնիկայի ստեղծման ու ներդրման, ժողովրդական սպառման նոր ապրանքների արտադրության՝ պլանով չնախատեսված միանվագ առաջադրանքների կատարման, ինչպես նաև արտադրանքի որակի բարելավման ուղղությամբ աշխատանքներ կատարելիս ձեռնարկությունների ու կազմակերպությունների կողմից անկախ խրախուսելու համար: Այդ ֆոնդի միջոցները նաև աղբյուր են իրենցից անկախ պատճառներով առանձին ձեռնարկությունների ու միավորումների նյութական խրախուսման ֆոնդի կրճատման դեպքում այն լրացնելու համար: Այդպիսի

կրճատումներ կարող են լինել, օրինակ, նոր տեխնիկայի յուրացման, սրտադրության վերահաստեղծման և հիմնական արտադրական ֆոնդերի կապիտալ նսրոգման, պլանով շնախատեսված ավելի թանկ հումքի օգտագործման հետևանքով ձեռնարկության վերջնական ցուցանիշների իջեցման դեպքում և այլն: Կարևոր խթանիչ հանգամանք է նյութական խրախուսման ֆոնդի մի մասը լարված պլանային առաջադրանքներ ստանձնած ձեռնարկությունների նյութական խրախուսման ֆոնդին ուղղելու հնարավորությունը:

Նյութական խրախուսման կենտրոնացված ֆոնդի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանից միջոցներ են հատկացվում մինիստրության կառավարման ապարատի աշխատողներին պարգևատրելու համար:

Մինիստրության նյութական խրախուսման կենտրոնական ֆոնդի ստեղծման աղբյուր են ենթակա ձեռնարկությունների շահույթից նախատեսված նորմատիվներով կատարվող հատկացումները. ըստ որում, ֆոնդի մեծությունը չպետք է գերազանցի ամբողջությունը վերցրած մինիստրության համար սահմանված նյութական խրախուսման ֆոնդի 15%-ը: Սակայն, իրականում, մինիստրության նյութական օգնության կենտրոնացված ֆոնդը շատ ավելի փոքր է թույլատրելի սահմանից: Այսպես, 1979 թ. այն կազմել է 665 հազ. ռ. կամ ամբողջ մինիստրության նյութական խրախուսման ֆոնդի 6,9%-ը, իսկ 1980 թ. 1073 հազ. ռ. կամ 10,3%-ը: Նյութական խրախուսման կենտրոնացված ֆոնդի անբավարարվածությունը զգալիորեն փոքրացնում է մինիստրության դերը խթանման համակարգը կազմակերպելու գործում, հանգեցնում ստորադաս կազմակերպությունների տնտեսաշվարհի թուլացմանը, քանի որ, միևնույն է, դրանց նյութական խրախուսման ֆոնդերի մեծությունը կենտրոնացված ձևով կարգավորելու օբյեկտիվ պահանջը չի վերանում: Այն իրականացվում է ձեռնարկությունների ու միավորումների նյութական խրախուսման ֆոնդերի պարզ վերաբաշխման միջոցով: Այս կապակցությամբ նպատակահարմար է մինիստրության նյութական խրախուսման կենտրոնացված ֆոնդը ստեղծել ամբողջությամբ վերցրած մինիստրության համար սահմանված նյութական խրախուսման ֆոնդի 15%-ի չափով:

Բացի այդ, անհրաժեշտ է կատարելագործել մինիստրության ապարատի աշխատողների խրախուսման միջոցների ստեղծման կարգը, որոնց աղբյուրն է նյութական խրախուսման կենտրոնացված ֆոնդը: Նպատակահարմար է մինիստրության նյութական խրախուսման կենտրոնացված ֆոնդը բաժանել հրկու մասի՝ դրա օգտագործման հիմնական ուղղություններին համապատասխան: Առաջին մասը պետք է ծառայի ամբողջ մինիստրության աշխատանքի արդյունքներով կենտրոնական ապարատի աշխատողներին պարգևատրելու և նյութական օգնություն ցույց տալու, փսկ երկրորդը՝ իրենցից անկախ պատճառներով տնտեսական ցուցանիշների ժամանակավոր իջեցման կապակցությամբ առանձին ձեռնարկությունների ու միավորումների նյութական խրախուսման ֆոնդերը լրացնելու նպատակին:

Նյութական խրախուսման կենտրոնացված ֆոնդի օգտագործման երկրորդ ուղղությունում կարող են լինել երկու դեպք. առաջին՝ երբ ցուցանիշներն իջնում են կառավարման կենտրոնական ապարատի գործողություններից անկախ պատճառներով, երկրորդ՝ երբ դա տեղի է ունենում մինիստրության մեղքով: Վերջին դեպքում պետք է որոշակի չափով (տոկոսով) նվազի նյութական խրախուսման կենտրոնացված ֆոնդի այն մասը, որն օգտագործվում է կառավարման կենտրոնական ապարատի աշխատողների պարգևատրման համար՝ համապատասխանաբար մեծացնելով ձեռնարկությունների նյութական խրախուսման ֆոնդին ուղղվող բաժինը: Դրանով իսկ կուժեղացվի մինիստրության աշխատողների նյութական պատասխանատվությունը՝ ընդունվող որոշումների որակի համար:

Չկենտրոնացված կապիտալ ներդրումների ռեսուրսները նպատակասլաց օգտագործելու, լրացուցիչ կարողություններ ստեղծելու, արտադրությունը մեքենայացնելու և ավտոմատացնելու, առաջավոր տեխնոլոգիական պրոցեսները ներդնելու համար մինիստրությունում ստեղծված է արտադրության

զարգացման կենտրոնացված ֆոնդ: Այն կազմվում է մինիստրության իրավասությանը ենթակա ձեռնարկությունների ամորտիզացիոն մասհանումների մինչև 50%-ի, ինչպես նաև շահույթից նորմատիվներով կատարվող հատկացումների հաշվին: Արտադրության զարգացման կենտրոնացված ֆոնդի ընդհանուր մեծությունը չպետք է գերազանցի արտադրության զարգացման ամբողջությամբ վերցրած մինիստրության ֆոնդի 15%-ը: Պետք է նշել, որ վերջին ժամանակներս, մի շարք պատճառներով (նյութական ռեսուրսներով ապահովված չլինելը, շինարարական կազմակերպությունների անբավարար կարողությունը և այլն) այդ ֆոնդը զգալիորեն կորցրել է իր խթանիչ նշանակությունը: ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1979 թ. հուլիսի 12-ի «Պլանավորումը բարելավելու և արտադրության արդյունավետության ու աշխատանքի որակի բարելավման վրա տնտեսական մեխանիզմի ներդրությունն ուժեղացնելու մասին» որոշումը նախատեսում է արտադրության զարգացման ֆոնդի հետագա կատարելագործման և նրա տնտեսաշարժարկային ֆունկցիաների վերականգնման. նպատակին ուղղված միջոցառումներ: Մասնավորապես, նախատեսվում է այդ աղբյուրի հաշվին ֆինանսավորվող աշխատանքները մտցնել կապիտալ ներդրումների պետական պլանի մեջ, որը թույլ կտա էապես բարձրացնել արտադրության զարգացման ֆոնդի ապահովվածությունն անհրաժեշտ ռեսուրսներով:

Մինիստրության տնտեսաշարժի սխեմանում կարևոր տեղ է գրավում նաև այն ձեռնարկությունների մինչև մեկ տարի ժամկետով վերադարձվող փոխառություններն տրամադրելու համար նախատեսված ռեզերվը, որոնք որոշակի պատճառներով սեփական շրջանառու միջոցների պակաս են զգում և սպասել են բանկից վարկ ստանալու հնարավորությունները: Մինիստրության համար այդ ռեզերվի չափը սահմանված է պլանային շահույթի 3%-ի չափով:

Հսկակական ՍՍՀ թեթև արդյունաբերության մինիստրությունում ֆինանսական օգնության ռեզերվի կազմավորման և օգտագործման փորձի վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել մի շարք թերություններ և կատարել համապատասխան առաջարկություններ դրանց վերացման համար:

Նախ, վերջին երեք տարում ֆինանսական օգնության ռեզերվը մեծ չափերի չի հասել: Այսպես, 1979, 1980 և 1981 թթ. ռեզերվի չափը մինիստրության շահույթի համեմատությամբ կազմել է համապատասխանաբար 0,3, 0,65 և 1,1 %, մինչդեռ կանոնադրությամբ նախատեսված է 3%: Իսկ մեր հաշվարկներով ռեզերվային միջոցների իրական պահանջը կազմում է շահույթի 3,8—4%-ը: Այդ ռեզերվի փոքրության հետևանքով ձեռնարկությունների շրջանառու միջոցների լրացմանն ուղղվող ֆինանսական ռեսուրսների զգալի մասը, շրջանցելով մինիստրության ռեզերվը, բաշխվում է շրջանառու միջոցների պարզ վերաբաշխման միջոցով: Ֆինանսական ռեսուրսների բաշխման այդպիսի եղանակը ձեռնարկությունների և մինիստրության ֆինանսական վիճակի կայունացմանը չի նպաստում: Բանն այն է, որ անմիջականորեն վերաբաշխվող ֆինանսական ռեսուրսները մինիստրության հաշիվներում գրանցված չեն, այլ ամրացված են ձեռնարկություններին ու միավորումներին: Սակայն ընթացիկ գործունեության ընթացքում բազմիցս անհրաժեշտ է լինում վերաբաշխել մինչև այդ և՛ ձեռնարկությունների ամրացված մեջոցները, որով անկայուն ֆինանսական դրություն է ստեղծվում առանձին ձեռնարկություններում ու ամբողջ մինիստրությունում: Ուստի, նպատակահարմար է փաստականի համեմատությամբ մեծացնել մինիստրության ֆինանսական օգնության ռեզերվի չափը, այն սահմանել մինիստրության շահույթի 3,8—4%-ի սահմաններում:

Երկրորդ, ֆինանսական օգնության ռեզերվի կազմավորմանը մինիստրության բոլոր ձեռնարկություններն ու միավորումները չեն մասնակցում: Այսպես, պլանային շահութաբեր 27 ձեռնարկություններից 1980 թ. մինիստրության ֆինանսական օգնության ռեզերվի օգտին միջոցներ են հատկացրել 2-ը, իսկ 1981թ. 5-ը: Մինիստրության մնացած արտադրական միավորները, զգալի միջոցներ ունենալով, ռեզերվի կազմավորմանը չեն մասնակցել: Այդ-

պիտի պրակտիկան նպատակահարմար համարել չի կարելի. մինիստրության ֆինանսական օգնության ռեզերվի կազմավորմանը պետք է մասնակցեն պլանային շահութարհր բոլոր ձեռնարկություններն ու միավորումները: Ինչ վերաբերում է ռեզերվի օգտին կատարվելիք հատկացումների կոնկրետ չափերին, ապա դրանք պետք է շերտավորման ենթարկվեն ըստ ձեռնարկությունների՝ նայած դրանց ֆինանսական վիճակին:

Վերահիշյալ առաջարկությունների իրականացումը կնպաստի նյութական խրախուսման կենտրոնացված ֆոնդի ու ֆինանսական օգնության ռեզերվի կազմավորման և օգտագործման կարգավորմանը, առանց որի Հայկական ՍՍՀ թեթև արդյունաբերության մինիստրության սխտեմով հնարավոր չէ անտհաշվարկային հարաբերությունների հետազա զարգացումը:

РАЗВИТИЕ ХОЗРАСЧЕТА В СРЕДНЕМ ЗВЕНЕ ОТРАСЛЕВОГО УПРАВЛЕНИЯ

(на примере Министерства легкой промышленности Арм. ССР)

НЕРСЕС БУРНАЗЯН

Резюме

Разработка и внедрение генеральных схем управления отраслями промышленности по-новому ставят проблему определения экономических границ хозрасчета, предусматривают превращение его в форму хозяйствования среднего отраслевого звена и продвижение принципов хозяйственного расчета на высший уровень отраслевого управления.

Неотъемлемой составной частью системы мер, предусмотренных Генеральной схемой управления легкой промышленностью СССР, явился перевод с мая 1975 г. предприятий Министерства легкой промышленности Армянской ССР на трехзвенную систему управления. В новых условиях Минлегпром республики является средним звеном в системе отраслевого управления, действующим на основе хозяйственного расчета.